

ԻՐԱՎՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտասահմանի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հիմնուել հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆՔ» ԼՐԱԳՐԱԹ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլիարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւո-
նեւր միայն կը հրատարակուին աւ-
րողովին կամ մասաւր.
Դանուցման տողը 20 սանթիմ. երե-
թեւ աւելի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի:

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

Բ.

Մեր յօդուածի Պ. մասով բա-
ցատրեցինք թէ վարժապետը ուղ-
ղակի մեր զաւակաց բարոյականի
կաղապարն է. այնպէս որ մեր
այսօրուան անշտափաճ մանուկին
վաղուան, այսինքն իր կատարե-
լութեան, պատկերը իր այս աւուր
դաստիարակին վրայ կրնանք տես-
նել. Արդէն ըսինք որ իթէ վար-
ժապետը բարի, ազնիւ ու հա-
մեստ է, նոյն յատկութիւնները
առաւել կամ նսւաղ կանգրադառ-
նան իր աշակերտին վրայ. իսկ ե-
թէ լիբր, անպատկառ ու անբա-
րոյական խմոր մը կը կրէ վար-
ժապետը նոյն խմորով չաղախուե-
լու վտանգին մէջ կըլլայ մեր զա-
ւակը: Այս ճշմարտութիւնը այն-
չափ բնական հիմքերու և գործնա-
կան ապացոյցներու վրայ հաստա-
տուած է, որուն հակառակը փաս-
տել ըստ մեր համոզման անկարե-
լի է:

Արդ, քանի որ վարժապետը
կոչուած է մեր ապագայ սերուն-
դին բարոյականի հիմքերը հաստա-
տելու, նա այդ բարոյական չէն-
քին ուրուագիծերը գործնականա-
պէս իր անձին վրայ պատկերա-
ցնելու է. ինք, վարժապետը, նոյն
բարոյական մարդը ըլլալու է ինչ
բարոյականութիւն որ կապանք
իր սաներէն, այսինքն անոր ձեռ-
քը յանձնուած մեր զաւակներէն:

Ուստի ժողովուրդը կամ անոր
փոխանորդող հոգաբարձութիւնը
վարժարանի մը ուսուցչական մար-
մինը կազմակերպելու տանն պէտք
է լաւ ըմբռնէ թէ որչափ ահա-
գին պատասխանատուութիւն մը
ունի հանգէպ ազգին և ապագայ
սերունդին: Երբ յախուռն ու ան-
խորհուրդ ընտրութիւն մը կատա-
րեն, առանց լաւ մը ճանչնալու ի-
րենց պաշտօնի կոչած նոր վարժա-
պետին ոգին, բարոյականի մա-
կարդակը և անոր ներքին մարդը,
հարիւրաւոր մատաղ մանուկներու
ապագան մթութեան, անստու-
գութեան մատնած ու բողբոջին
յանձնած կը լինին. իսկ երբ դէպ-

քեր եւ պարագաներ զան ու ա-
պացոյցանեն թէ չարաբաստիկ
ընտրութիւն մ'է եղեր կատարած.
նին, և վարժապետը ցոյց տայ իր
ներքին մարդը լիբր, բիւր, մոլի
ու վաւաշոտ, անպատկառ ու հա-
յոյիչ. ինչ կը մնայ այլ եւս ժո-
ղովուրդին կամ անոր փոխանորդող
հոգաբարձութեան ընել. այդ աղ-
տոտ ու կեղտոտ վարժապետը առ-
նել նստիլ թէ, առանց ժամանակ
կորսնցնելու դպրոցին դուռը ցոյց
տալ ու «երթաս բարով» ըսել:
Անշուշտ գործնական ու փրկարար
միջոցը այս վերջինն է. բայց ա-
ւել, ցաւալի է ըսել թէ ստէպ
այս միջոցը ձեռք չի առնուիր,
այլ հոգաբարձութեանը կերկարա-
ձգեն խնդիրը: Իրենց ընտրու-
թեան մէջ սխալած ըլլալին եսա-
սիրութեամբ քաղարկել ուզելով
հետեւապէս երկար ամիսներ նոյն
իսկ տարիներ նոյն աղտոտ վար-
ժապետը կը շարունակէ իր պաշ-
տօնը դպրոցին մէջ, մատուց մա-
նուկներուն մի քանի բառի, մի
քանի քերականական կանոնի հետ
կը սովորեցնէ, կազդէ ու կը ներ-
շնչէ աղաղան աղտոտութիւններ
զորս յար կը պատկերացնէ իր
անձին վրայ իր ամենօրեայ նիստ
ու կացովը և վարք ու բարքովը:
Հոս աւելորդ է բացատրել թէ
սպառ աւելի չարին կը ձգտին.
երբ անոր օրինակը կը տեսնեն
իրենց ուսուցչին գործերուն ու
խօսքերուն մէջ:

Այդ կարգի վարժապետներու
քանի քանի օրինակներ ու-
նինք սա փոքրիկ Պոլիարիոյ մէջ.
որոնք մէկէ աւելի աղտոտութիւն.
ներ ցոյց տուած ըլլալով հանգրձ
երկար ամիսներ ու նոյն իսկ տա-
րիներ պահուած են ու կը պահ-
ուին վարժարանաց նուիրական
յարկերուն տակ, ի մոլորումն մա-
նուկներու և ի գայթակղութիւն
չափահասներու: Այսպիսիները ի-
րենց պաշտպաններն ալ ունեցած
են ու կունենան, մանաւանդ երբ
պատկանին ու եւ չի յեղափոխական
կուսակցութեան. իրենց կուսակից.
ները ամեն գնով կը պաշտպանեն
զանոնք առանց զանազանելու յե-
ղափոխական խնդիրը կրթական
հարցէն:

Ահա հոս կ'սկսի կռիւը, կու-
սակցութիւնը կուսակցութեան դէմ
ժողովուրդը կարգ մը յեղափոխա-
կանաց դէմ, և կը տուծէ այսպէ-
սով թէ կրթական գործը թէ յե-
ղափոխութիւնը և թէ մանաւանդ
անմեղ մանկութիւնը:

ԵՐԿՈՒ ԱՆԿԵՂԾ ԽՕՍՔ

Չիմ կրնար երեւակայել աւելի
տխուր և փրաստկար երևոյթ մը
քան հետզհետէ շեշտուին այն
հակառակութեան որ յեղափոխու-
թեան անունով այսօր հայ ժողո-
վուրդը կը բաժնէ երկու ուրոշ
մասերու: Բաժանումը այժմ ար-
դէն այնքան լայնցած է որ ոչ
միայն կընդգրկէ յեղափոխական
շարժումները ու գործերը որոնք
իրարու տրամադժապէս հակառակ
տեսակէտներով և ոգիով կը դա-
տուին: Այլ և կերթայ կը տարա-
ծուի մինչեւ տեղական գործերու
մէջ և կը սողոսկի եկեղեցիին ու
դպրոցին սեմերէն ներս: Մեր
դժբաղդութենէն հզօր տարր մըն
ալ կ'աւելնայ այն արդէն շատ մը
պատճառներուն վրայ որոնք ցարդ
արգիւր կըլլային տեղական վար-
չական մեքենաներուն կանոնաւոր
և յարատեւ գործունէութեան: Թէ
այս որքան աղետաբեր կրնայ ըլ-
լալ, ահնեղեւ ցոյց կուտայ փ-
Պօլսոյ ազգ. գործերուն արդի վի-
ճակը:

Կըսուի թէ տեղւոյն վարժա-
րանները հիմայ այնքան իրական
բարեկարգութենէ զուրկ են որ ի-
րենց գոյութեան իրաւունքը կոր-
սնցուցեր են և ինչ որ կը ծախ-
սուի այդ հաստատութեանց հա-
մար, պարզապէս փողոց նետուած
դրամ մըն է: Այս եղաւ երկու
հակառակորդ կուսակցութեանց
միջեւ ամենաբռնուն միջոցներով
մղուած երկար պայքարի մը վերջ-
նական արդիւնքը: Եւ ամենէն ցա-
ւալի կէտը սա է որ իրերու ար-
դի կուցութիւնը չի ներիր բնաւ
յուսալ թէ յառաջիկայ դպրոցա-
կան տարեշրջանին մէջ վարժա-
րանները կարենան լաւագոյն վի-

ճակ մը ունենալ: Ուրեմն մեր փ-
Պօլսոյ ազգակիցները պարզապէս
կրթական գործը տարիներով ծա-
րագոյն ամուլթեան մը մատնելու
համար միայն զիրար ատրճանակի
հարուածներով հալածած եղան
ազգ. հանգէտներու մէջ: Ու ինչ
կուզեն ըսեն, պայքարը մղող կու-
սակցութիւնները ինչ անուն ալ
որ կրեն և իսկապէս ինչ նպատա-
կով ալ գործած ըլլան, սաչափը
գոնէ անուրանալի է որ յեղափո-
խական գործերու և անձերու շուր-
ջը դարձող համակրութիւններ և
հակակրութիւններ մեծ և շատ
մեծ դեր մը խաղացին փ. Պօլսոյ
տեղական կռիւներուն մէջ:

Ինչ որ պատահեցաւ հոն, կըր-
նայ պատահիլ նաեւ ուրիշ բազա-
րներու մէջ, սա պարզ պատճառով
որ պատահածը արդիւնք էր այն-
պիսի պատճառներու որոնք կը նըշ-
մարուին ու կան ամեն տեղ. ամեն
տեղ մեր յեղափոխական գործերը
ինչպէս մինչեւ երկինք բարձրաց-
նելով գովոյններ, այնպէս ալ մին.
չեւ գետնին տակ իջնցնելով պա-
խարակողներ կան: Ահա հակա-
ռակութեան բուն աղբիւրը, որմէ
ծորող թոյնը կապառնայ վարակել
բայքայիլ ամեն ինչ, թէ՛ ազգ.
Դատին նուիրութիւնը ընդհանուր
ուժերու կարօտ գործունէութիւնը
և թէ՛ տեղական ազգ. գործերու
կանոնաւորութեան համար հար-
կաւոր ջանքերը:

Պարապ աշխատութիւն մը պի-
տի ըլլար տեսականին մէջ որոշա-
պէս իրարմէ զատել մէկ կըլմէն
ինչ որ ընդհանուր և համազգա-
յին է, և միւսէն՝ ինչ որ տեղա-
կան, մասնաւոր է և բացատրել
թէ ատոնք իրարմէ տարբեր բա-
ներ ըլլալով, առաջինին մէջ ի-
րարու հակառակորդ գտնուողներ
կրնան երկրորդին մէջ համընդ-
խաբար գործել: Գործնականին
մէջ անհասկանալի և անգործադ-
րելի պիտի մնար այդ տեսակա-
նապէս շատ տրամաբանական բա-
ժանումը:

Եթէ կուզենք չարիքը արմատէն
բուժելու ջանալ, ստիպուած ենք
ուղղակի ընել ու պարզաբանել
մեր յեղափոխական գործերու մա-

սին կեցած անհամաձայն տեսու-
թիւնները և փնտռել թէ չի կա-
կէտեր ուր կարենան հակառակ
մտածողներ իրարու մօտենալ և
զիրար հասկնալ: Խօսքս անշուշտ
անկեղծ մարդերու համար է և ոչ
թէ միտքերը պղտորելու և գայ-
թակցութիւն ցանկելու մէջ անձ.
նական հաշիւ գտնող բարոյական
հրէշներուն համար:

Գուցէ նոյն իսկ ժողովուրդին
անկեղծ մեծամասնութիւնը աչքի
առջեւ ունենալով, զուր ջանք մը
ըլլայ համեմատութեան ոգիին
ծաւալման սատարող տեսութիւն.
ներ պարզել այնպիսի ժամանակ
մը ուր միտքերը աւելի քան եր-
բէք մշուշի և յուզումի մէջ են և
այս, իմ խոնարհ կարծիքով, շնոր-
հիւ այն թերթերուն որոնք լու-
սաւորելու տեղ կը պղտորեն, չի-
չելու տեղ կը քանդեն և միացնե-
լու տեղ կը զատեն:

Սակայն հոգ չէ: Գոնէ պար-
տականութիւն մը կատարած կըլ-
ամ: Փորձենք:

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քաղիզ, 14 յունիս 1899

ՖՈՒՆԱՄԱՅԻ ՄԻՆԻՍԴՐՈՒԹԵԱՆ ԱՆՎՈՒՄԸ

Մի քանի օրերէ ի վեր, Տիւ-
փիւլիի մինիստրութիւնը ամեն
անկողնակալ դիտողներու համար
խախտած կերեւար. կը տեսնուէր
որ ամենափոքր պատճառ մը անոր
անկման պիտի բուէ: Անկումը
պատահեցաւ: Այս անգամ նշմա-
րել տանք թէ այն կարճ ժողովի
ժամանակ, յորում մինիստրու-
թեան վրայ վստահութեան քուէ-
արկութիւնն բացարձակապէս մեր-
ժուեցաւ, և ոչ մէկ լուրջ տրիքոն
խօսեցաւ, միայն մի քանի անծա-
նօթ ընկերավարականներ խօսեցան,
որոց ամենամեծանին էր Պ. Պը-
լանքի՝ պետ Պրանքիստ կուսակ-
ցութեան. իրաւ է թէ՝ եթէ այս

կուսակցութիւնը միայն 7-8 ներ-
կայացուցիչներ ունի խօսարանին
մէջ, բաւական զօրաւոր է սակայն
այդ ներկայացուցիչներու յեղա-
փոխական հաստատամտութիւն և
անոնց թոքերու զօրութիւն:

Մինիստրութեան կործանումը
մասնաւոր փոքրիկ ժողովներու
մէջ որոշուած էր, որ ժողովնե-
րուն կը մասնակցէին մի քանի
յայտնի և ազդեցիկ անձնաւորու-
թիւններ, որոնք ժամանակէ մը
ի վեր իրենց գեղեցութիւն չէին
ծածկեր: Գեղեցութեան պատ-
ճառներն շատ զանազան էին, ա-
նոնց վրայ գաղափար մը կազմե-
լու համար կարելի է մինիստրու-
թեան հակառակ քուէարկող կու-
սակցութեանց պիտերու վրայ ալ-
նարկ մը ձգելով գոհացում ուտա-
նալ: Հակառակորդներն էին Գիւ-
նէօ տ' Օռնանօ՝ Պոնաբարթիստ,
կաթոլիկներ ինչպէս՝ տը Մէօն,
միացողներ ինչպէս՝ տը Մաքէօ,
հակադէմոկրատական չափաւորա-
կաններ ինչպէս՝ Ռուվիէ, արմա-
տականներ ինչպէս՝ Պրիստօն, և
ընկերավարականներ ինչպէս՝ Վիվ-
կանի և Միլլըրան: Բոլոր այս
գեղեցիկներու գաղափարութիւնն ա-
ռաջ բերաւ 300 երեսփոխաննե-
րու թիւ մը, մինչ մինիստրու-
թիւնն իրեն կուսակից ունէր մի-
այն 150 երեսփոխաններ:

Շատ դիւրին է հասկնալ թէ
մինիստրութիւնը ինչպէս ինկաւ.
յանցանքը մինիստրին չէ, ալ
խորհրդարանին կազմութեան: Կու-
սակցութեաններն այնքան շատ են
այստեղ, որ անկարելի է կառա-
վարական միայնուն մեծամասնու-
թիւն մը կազմել: Ամեն մինիս-
տրութիւն երբ առաջին անգամ,
իւր ընտրուելէն յետոյ կը ներկա-
յանայ, անորոշ ֆրագրով մը,
զրիթէ ամեն քուէարկողներն իւր
կողմ կը լինին. այսպէս եղաւ
նաեւ Տիւփիւլիի համար: Բայց
երբ մինիստրութիւնը կը պիտի ալ-
և ալ պատճառներով մէկ կամ միւս

կուսակցութիւնը գեղեցիկներու հա-
վատացնել, այն ժամանակ մինիս-
տրութեան կուսակիցներն կամաց
կամաց կը պակսին և միայն փոք-
րամասնութիւն մը կը մնայ:

Այս հանգամանքներու մէջ,
կարելի է ըսել ամբողջ ֆուտու-
կան մամուլին հետ թէ երկուշաբ-
թուա քուէարկութիւնն, ընա-
քաղաքական նշանակութիւն մը
մը չունի, վասն զի մինիստրու-
թեան դէմ գաղափարներն ամե-
նատարբեր գաղափարներու ծա-
ռայողներ են: Ուրեմն փոխանակ
անհաստատ և անհիմն նկատողու-
թիւններ ընելու սպասենք նոր
գաղափարներ մը կազմութեան:

Լօնդանի ձիարշաւը

Շատ ուշէ անցեալ կ'երևակնե-
րուան վրայ մանրամասն տեղեկու-
թիւններ տալու համար: Լօնդանի
ձիարշաւին համար, այնպիսի ըզ-
գուշութիւններ ձեռք առնուած էին
որ անկարելի էր ունէ լուրջ ար-
կածի պատահումը, ամբողջ ձի-
արշաւի գաշտը պիտուրներէ և
ոստիկաններէ բռնուած էր: Մա-
կայն իրիկուան դէմ պատահած ի-
րարանցումները շատ զայրացու-
ցին կուսակցութիւնները և մի-
նիստը Տիւփիւլի անկման պատճառ
եղան:

Դատաւարատնային

Պարուն տը Քրիստիանի

Պարուն տը Քրիստիանի, չորս
տարուան բանտարկութեան դատա-
ւարտուեցաւ Հասարակապետու-
թեան Նախագահին վրայ յարձա-
կած լինելուն համար: Պատժական
Օրինաց 228րդ յօդուածն զրիթէ
ամբողջապէս գործողութեան Պա-
րունին վրայ, բացի նոյն յօդուա-
ծին վերջին մասէն որ կըսէ թէ՝
յանցաւորն իւր գաղափարաւորութեան
յետոյ կը կորսնցնէ իւր քաղաքա-
կան և ընտանեկան իրաւունքներն,
ամբողջ 5 տարի առնուողն և 10
տարի առաւաւելն և սոս իւր բան-

տէն ազատ արձակուելէն յետոյ,
ասկէ դատ նա ոստիկանական հս-
կողութեան տակ կ'իյնայ: Բայց
ինչպէս ըսինք տը Քրիստիանի
միայն չորս տարի բանտարկու-
թիւն պիտի ունենայ:

Եւ որովհետեւ Նախագահն ի-
րաւունք ունի ընդունել ընկալ, դա-
տաւորներն մասնաւոր նպատակով
մը վերոյիշեալ յօդուածին երկ-
րորդ մասն մոռցած են: Հասարա-
կապետութեան Նախագահն իմա-
նալով Պարուն տը Քրիստիանի
գաղափարաւորութիւնն ըսեր է «ա-
հաւաստիկ չորս տասնիկ որոնք
շատ շուտ պիտի անձինն»: Ասկէ
աւելի ըսել կերպով կարելի չէ ծա-
նուցանել ընդունք մը:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԵՍՊՈՒՍԻՈՐԶՈՒՐԻ

—

Լու չէին կը գրուի. «իրաւա-
րարութեան յանձնաժողովն ամե-
նէն բարեբախտան եղաւ: Իր մաս-
նախումբ յետ երկար վիճաբանու-
թեանց, յաջողեցաւ համաձայնու-
թիւն գոյացնել. միջնորդութեան
ծրագրին առաջին ութ յօդուած-
ներուն վրայ: Ասոնցմէ վեցն առ-
նուեցան ռուսական ծրագրէն,
եօթներորդն առաջարկեց կոմս
Նիկոլա և ութերորդը Մ. Նահան.
գաց պատուիրակ Հոլս: Պայմա-
նագրին ստորագրողը կորսնցն
որ ծանր անհամաձայնութիւն մը
պատահած ատեն, հակառակորդը
դէնքի դիմելէ առաջ, մէկ կամ
աւելի բարեկամ տէրութեանց միջ-
նորդութիւնը պիտի խնդրեն: Նոյն
իսկ տէրութիւնը պիտի կրնան ի-
րենք միջամտել և այս իրաւուն-
քին գործադրութիւնը հրաք ոչ-
բարեկամական գործ մը չը պիտի
նկատուի: Այս միջնորդի դերը
պիտի կրնայ շարունակուել նաեւ
Թշնամութեանց միջոցին: Չենք
կրնար ըսել թէ միջնորդութիւնը
օգտակար պիտի չըլլայ, բայց մի-
եւնոյն ատեն չենք կրնար չիլիել

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (16)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԺԲ.

Փետրվարի 6՝ շատ պայծառ ցերեկին
յաջորդեց յստակ գիշեր մը ուր աստե-
ղազարդ կամարը իր ազօտ լույսերով
կարծես անջրպետը այրելու կը միտի:
Գիշերուան երկրորդ պահն է:

Գիշերը հետզհետէ կը յառաջանայ.
լուսինկան զենիթին կը մօտենայ. խոր-
հրդաւոր լուսթիւնը մեծավայելուչ
կերպով կը տրեւ. վերջապէս կէս գի-
շերը կը հնչէ:

Այս պահուս Գուլումէեանց փողոցի
մէկ անկիւնէն ստուերի մը առաջա-
նալը նկատելի եղաւ. քաղղը տատան-
ուող փութկոտութիւն մը ցոյց կու-
տար. երկու անգամ ետին դարձաւ եւ
երկրորդը վերջինը եղաւ. ընալը չիլի

մը ձեւերը կը նշմարուէին իր վրայ.
այս անգամ հինգ տասը քայլափոխէ
ետք գնացը երազեց. դէպի վերի թա-
ղը առաջացաւ. հոն կարծես նորէն
քայլերը չափէ դուրս կ'ընտեցան. մէկ
երկու բառեր միմեայ, այնքան ցած
ձայնով մը որ իրեն շատ մօտէն հե-
տեւող մ'ալ չպիտի լսէր. միշտ քայլե-
ցկաւ հասաւ: Մարդարեանց փողոցը, հոն
որոշակի զգացումով խեղդուկ այլ աղե-
կատառ հառաջ մը թաւ իր թոքերէն
դուրս. Յովհաննէս աղայի դրան մօ-
տեցաւ. ներսը լոյս կը վառէր նախա-
սենեակը որ փողոցին վրայ կը նայէր.
կերեւալ դեռ եւս ակիւն վերայինէ ան-
ջուռ կը հսկէր, ինք ալ չգիտնալով
թէ ինչի վրայ. ընկելը չգիտնող խե-
ղայեղի մը պէս պահ մը սեմին վրայ
նստաւ եւ դառնապէս սկսաւ տրտա-
սուիլ. այդ դիւրեքին մէջ սեմին վրայ տա-
ւը վայրկեան մնալէ վերջ ոտքի կ'ստե-
նելով անգամ մը երկինք անգամ մ'ալ
տունին նայեցաւ. սուր հառաջէ մը
ետք յուսահատի մը պէս, կեանքէ առ
յաւէտ զգուշողի մը պէս ձգեց սեմը եւ

սկսաւ հեռանալ առաջին տատանումնե-
րով:

Ընթերցողը անշուշտ նեղութիւն չը
կրեց հասկնալու համար որ այս պիչե-
րայիլիկ երեւոյթը կրող շնչաւորը
Վահրամէն էր որ իր փախուստի ծրա-
գիրը կը գործադրէր:

Խեղճ երիտասարդը իր փախուցի-
կացեալին մէջ պահ մը ձեռքին մատնե-
րը ջղաձիգ շարժումով մը իրարու մի-
ացուց եւ «Գարա սո՛ւ, Գարա սո՛ւ»
միմեայ ահա որ եղանակով մը որ սար-
սուռ պիտի ազդէր զայն լսողին վրայ.
բայց տեսնուեցաւ որ սեւ խորհուրդին
այս րոպէական մտքի քայքայումին յա-
ջորդեց զօրաւոր եւ գիտակցական ըզ-
գաստութիւնը. «Երբէ՛ք, երբէ՛ք, պա-
տասխանեց ինքն իրեն, պիտի ապրիմ
որովհետեւ խոստումս որ իւր խոստումս
չկատարեցի, զայս կը պահանջեն
ինձմէ Հրանդիս եւ Հայրենիքս»:

Մինչդեռ այս խոսքերով կը տանջուէր
զգաց որ իր քայլերը անգիտակցաբար
զինքը քաղաքին հիւսիս արեւմտեան
կողմը ուղղուել էին:

Ինչպէս պիտե՞ք Վահրամ հետիոտն
կիրառան պիտի մեկնէր. այս միջոցը
լուսազոյն համարած էր կառք կամ ե-
րկվար վարձելէն, քանի որ այդու խը-
ճուղիի ուղղութիւնը բռնել պէտք պի-
տի ըլլար որ իր առջին գեղեցիկու-
թիւններ կրնար նանել:

Հիմա առանց ժամանակ կորսնցնելու
խճուղիի ձախակողմէն շեղեցաւ, ա-
ռանց կամուրջի կողմը երթալու որ
Գարա Սուր վրայ ձգուած գիշերները
բաց է անցուցածը խափանելու հո-
մար: Սանտրգ պալլարի արահետէն
կը բարձրանար որ կանոնաւոր քաղղի
մը համար մէկ ժամի տեւողութեամբ
զրիթէ ուղղահայեաց գառիվի մըն է՝
զառիվիւր տեղացիներու ձեռքով չի-
ռած աստիճան ունի բաւական տեղ
ուրիշց ետք մազլոյմի մօտ մօքա-
ռում մը անհրաժեշտ է մանաւանդ գի-
շեր ատեն. Վահրամ մօտէն ծանօթ էր
այդ գառիվիւր խորտուբորդներուն.
քանի քանի անգամներ ընկերներով
զբօսաշրջիկներով կամ առանձին ման-
կեղծ էր այդ տեղերը. միօրինակ ե-

այն սեղմումներ որ դրուեցան ա-
նոնց վրայ, Նախ՝ շրջ յօգուածին
մէջ ըստած է թէ վէճ ունեցող
տէրութիւնք այն ատեն միայն
միջնորդութեան պիտի դիմեն,
երբ բացառիկ պարագաներ պատ-
ճառ չըլլան: Արդ՝ ո՞վ պիտի որո-
շէ կամ սահմանէ այս պարագա-
ներ: Եւ որովհետեւ միջնորդու-
թիւնը պիտի դադրի այն վայր-
կեանէն իսկ ուր երկու հակառա-
կորդներէն մին կամ նոյն իսկ միջ-
նորդը համոզուին թէ միջնորդու-
թիւնն անյաջող պիտի ըլլայ, այս
պարագային մէջ ինչ յայտ կրնայ
գրուիլ անոր վրայ: Բայց զարմա-
նալին հոս է որ այս սեղմումներ
քիչ համարուեր են ուսնց համար,
և հաճախ իտալական պատուիրակին
կողմէ հետեւեալ բարեփոխումն ա-
ռաւարկուեցաւ 17րդ յօդուածին
համար: «Միջնորդութեան ըն-
դունելութիւնն արգելք մը պիտի
չըլլայ որ վէճ ունեցող տէրու-
թիւնք ընդհատեն կամ յապաղե-
ցնեն իրենց պատերազմական պատ-
րաստութիւնները:» Այս վերա-
պահումներ իրաւունք կուտան մեզ
կատարելութեան թէ տարբեր դիտա-
ւորութիւններ ծածկուած են այս
խաղաղապահ խօսքերուն տակ,
ծրդ յօդուածը պարզ յանձնարու-
թիւն մ'է տէրութեանց, «խա-
ղաղութեան սպառնացող ծանր
անհամաձայնութեանց ատեն:»
վէճ ունեցող տէրութիւնք մէկ
մէկ բարեկամ տէրութիւն պիտի
ընտրեն և այս վերջինք համախոր-
հորդ պիտի ջանան երկու վիճող
տէրութեանց յարաբերութիւնները
բարեփոխել: Մինչեւ 30 օր պիտի
աշխատին այս նպատակաւ, եւ ե-
թէ պատերազմն յայտարարուած
է, նորէն պիտի շարունակեն
աշխատել խաղաղութիւնը վերա-
հաստատելու համար: Կը ծափա-
հարկենք այս խօսքերուն, բայց
գործնական արդիւնք մը ունենան
անոնք: Միւս կողմէ կերկրի թէ
պատուիրակները գոհ են ձեռք

բերուած արդիւնքներէն, զի նոր
համաժողովներու կազմութեան կը
փափագին: Լիքսէմպուրկի մեծ
գլխավոր պատուիրակը խնդրեց
նոր համաժողովի մը խորհրդակ-
ցութեանց ենթարկել «Չէզոքներու
պարտուց և իրաւանց» խնդիրը:
Ուրիշներ ալ կուզեն որ զատ ժո-
ղով մը կազմուի ժընէվի դաշնա-
գիրը վերաքննելու և ցամաքային
պատերազմի մէջ ալ անոր գործա-
դրութիւնն որոշելու պաշտօնով:
Վերջապէս ուսնք ալ կառույտ-
կեն որ տէրութիւնք ուրիշ պատ-
ուիրակներ անուանեն նաւային
պատերազմի մէջ անհատական սե-
փականութեանց անբռնաբարելի-
ութեանց խնդիրն ուսումնասիրե-
լու համար:

Տ. ԳԵՈՐԳ. ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Կրօն. Ժողովոյ անցեալ Գշ.
աւուր նիստին որոշումներէ մին
հետեւեալ կերպով տրտատալով են
կ. Պոլսոյ ազգ. թերթերը:
Վառնայի մէջ կրկնաժողովու-
թիւն կատարող Հիւրմիւլեան Տ.
Գեորգ քահանային նկատմամբ
տեղւոյն թէ՛ Տ. Մարտիրոս աւագ
քահանային և թէ թաղ. Խորհր-
դին տուած տեղեկութիւններէն
կրօնական Ժողովը վերահասու ե-
ղաւ թէ՛ Տ. Գեորգ քահ. Հիւրմիւլե-
ան առանց սպասելու Պատրիար-
քարանի պատասխանին և հակա-
ռակ Տ. Մարտիրոս քահանայի
ազգարարութեանց, մի քանի ան-
ձանց բերանացի վկայութիւնները
բաւ համարելով պսակի խորհուր-
դը կատարել է Սպարաբան մա-
նուկի վրայ, որոյ կինը տակաւին
ողջ է եղեր. Ժողովն որոշեց պա-
կադրութիւնը չեղեալ համարել,
արգելիլ զՏ. Գեորգ քահ. երեք
տարի եկեղեցական պաշտամունք
և խորհուրդ կատարիլէ. յանձնա-
րարել տեղւոյն թաղ. Խորհրդոյ
որ պսակին համար քահանային
առած դրամն և եկեղեցւոյ տըր-
ուած 10 Փր. նուէրը բաշխէ հայ

կարօտելոց:
Կ'իմանանք թէ Տ. Գեորգ քա-
հանան Կրօն. Ժողովոյ արդար
վճռէն դժգոհ մնալով հանրագրու-
թիւն մը կը պատրաստէ և տնէ
տուն խանութէ խանութ պտրտե-
լով միամիտներ գտնել կը ջանայ
անոնց ստորագրութիւնները չա-
հագործելու համար: Կրօն. Ժո-
ղովը՝ որ ամբողջ ամիս մը ման-
րազնիւն ըննութիւններէ վերջ
վճիռ արձակած ու աննուղայ
քահանային արժանաւոր պատիժը
սահմանած է, վստահ ենք թէ իր
որոշման մէջ անյողգող պիտի
մնայ և Տէր Գեորգի այս զուր-
ջանքը իր ստահակութեան մի նոր
պայտոյց պիտի նկատէ, ինչպէս
կարգալոյծ Տէր Աթանասի այդ
օրինակ ջանքերը: Ուստի խոր-
հուրդ կուտանք մեր ազգայնոց
որ զգուշանան այդ արատաւորեալ
տէր պապին գործիք ըլլալէ և
խրատ տան անոր որ խելօք նստի,
որպէս զի պատիժը աւելի չի սաստ-
կանայ:

ԼՐԱՔԱՂ

Թոնոփայի եկեղեցւոյ ի նպաստ
հանգանակութեան ձեռնարկող Տէր
Կարապետ քահանան Նիքօսի գա-
ցած է նոյն նպատակաւ և հետդ-
հետէ քաղաքէ քաղաք պիտի շրջա-
գայի դրամ հաւաքելու: Կը մաղ-
թենք որ այդ քահանան գոնէ այս
գործին մէջ ճիշտակերտս դուրս
գայ, իսկ եթէ այս անգամ ալ
հանրութեան վստահութիւնը չա-
րաշար գործածել նկատի, ինչպէս
որ կը կարծեն շատերը, պատիժ-
ներու ծանրագոյնը կրելու թող
պատրաստուի: Տէր հայրը անըն-
պաստ կուսկածներու տեղի չի տա-
լու համար թող հաճի իր դիմած
իւրաքանչիւր քաղաքի մէջ պատ-
ուաւոր անձիւն ընկերակցութեամբ
հանգանակութեան պտրտիլ և գո-
յացած դրամը անմիջապէս զրկել
Թոնոփայի թաղ. Խորհրդոյ:

—Օրինակելի Զատիկ մը.— Գոն.
եաէ գրած են, «Այս տարի զատ-
կական շնորհաւորութիւնները շատ
արգենաւոր եղան հայերուն մէջ:
Քանի մը բարեաւոր անձինք գե-
ղեցիկ խորհուրդ մը յղացան, ի-
րենց այցելած տուններէն հայ կա-
րօտելոց նպաստ հաւաքելու հա-
մար հանգանակութեան տա-
մար մը վաւերացնել տունի թաղ.
Խորհուրդին. յուսախաբ չըլլան ի-
րենց ձեռնարկին մէջ, 25 ոսկիի
արդիւնք մը գոյացաւ՝ որ ինչպէս
հրատարակուած էր թեր-
թերու մէջ, անցեալ շաբաթ
զրկուեցաւ Ս. Պատրիարք հօր:
Ուսնք ալ շնորհաւորութեան եր-
թալու անպատեհութենէն ինք-
զինքնին ազատելու համար Ազգ.
վարժարանին մէջ մէկ մէծիտնու-
րեցին, որուն գումարն հասաւ 700
դահեկանի: Խումբ մըն ալ հրի-
տասարդներ Սահակեան նորակազմ
ընթերցարանին նպաստել ուզելով՝
Զատիկին Բ. օրը գիտական խա-
ղեր ներկայացուցին ազգ. վար-
ժատան մէջ: Այս առթիւ ընթեր-
ցարանն ալ 400 դահեկանի նպաստ
մը ընդունեց:»

—Անցեալ ԴՇ. Ղալաթիոյ Խոր-
հրդարանին մէջ տեղի ունեցաւ
խումբ Ժողովոյ նիստը, ընդ նա-
խագահութեամբ Օրմանեան Պատ-
րիարքի և ընդ դերատեսնապե-
տութեամբ Ստեփան բաշա Աս-
լանեանի:

Ժողովոյ մէջ նախ կարգացուե-
ցաւ Արքամութեան նախարարին
կողմէ հասած հրամանագիր մը,
որ գործադրուեր է:

Ժողովը յարաբերական և եկե-
ղեցական խնդիրներով ալ զբաղե-
լէ վերջ, երկար խորհրդակցու-
թիւն մը կատարեց Ազգ. Սահ-
մանագրութեան բարեփոխման (ի-
մա՝ չարափոխման) վերաբերեա
կէտերուն վրայ: Կրկին Գեր. Սան-
կունի եպիսկոպոս երկարօրէն վի-
ճաբանեցաւ Սահմանագրութեան
հիմիրը չի խախտելու համար.
այս օրինակելի եկեղեցականն է

ոսնդոտ թափով մը իր վերելքը սկսաւ
վերջագէտ հասաւ բլուրին գագաթը չըն-
չապաւտ եւ քրտնաթաթախ, հոն քա-
նի մը բուռէ հանգստանալով պէտքին
չկրնալով դիմագրել նստաւ. գիշերուան
լուսնին տխուր լոյսը իր վրայ տիրող
մութամղձորութիւնը կրկնապատկեց,
աչքերը այրիլ սկսան որուն յաջորդեց
հեծկաւորքը, մեքենաբար ձեռքիւր
զրպանը տարաւ ուրիշ հանեց մետաք-
սեայ անուշադրոյ թաշկինակ մը գոր-
ծակած ճակտին մօտեցուց ուրիշ քրո-
տիւնքը կը կաթկթէր, հոն անգամ մ'ալ
աչքին պատկերացան անցեալ տարի-
ները, իր մանկութիւնը, ընտանեկան
անմրցելի քաղցութիւնները, դպրո-
ցական կեանքը, իր աջոյնութիւնները,
աշխատութիւնները, գործի կեանքը,
Յովհաննէս աղան եւ վերջապէս Հրա-
նոյրը, Հրանոյրը եւ հոգին բռնկե-
ցաւ...:

«Օհ, լքեցի ամենն ալ մեծ անար-
գութեան գողը նետուելու համար, հա-
ռաջեց ինքը, այս ամենէն միայն եր-

կու շողափելի յիշատակներ մնացին քո-
վս թաշկինակ մը եւ ոսկի մատանի մը
զոր ան հրեշտակը տուաւ ինձ:»
Մատանին մատն էր իսկ թաշկինա-
կը ձեռքը. ինք ալ փոխադրածաբար
միեւնոյն յիշատակները ունէր Հրանոյ-
չի քով. հիմա երկու տատապալներուն
համար այդ յիշատակները անփոխարի-
նելի սրբութիւններ էին. Վահրամ
տեղդոտ համբոյրներով ծածկեց թաշ-
կինակը եւ մատանին իր, շատ շուտ
զգացած հալեցնող կարօտը յագեցնելու
համար:

«Որչափ ապրի Վահրամը գոք ալ
իրեն հետ պիտի ապրիք եւ եթէ օր
մը նորէն Հայրենիքի դռները բացուին
առջեւս զուք ալ հոն պիտի վերադառ-
նաք իմ անմահ գոհարներս. զուք
գառնութեամբ լի պանդխտութեան
մէջ պահապան հիւշատակներ եւ հայրե-
նիքիս, Հրանոյրիս կենդանի յուշա-
րարները պիտի ըլլաք:»

Այս կարծ մտախոսութենէն ետք
տքի կանգնելով սկսաւ շարունակել

ճանքան. լուսնի լուսով իր առջեւ
պարզուեցաւ թրքական Սանառք գիւ-
ղը որ վարը ձորին մէջ հաստատուած
է. կէս ժամէն կտրեց ձորը եւ միշտ
դէպի հիւսիս շարունակելով գնացքը
սկսաւ բարձրալալ Անտի-Տաւրոսի գա-
գաթը. այս երկրորդ վերելքը առաջի-
նէն հազար անգամ ծանր մաքառում
մը եղաւ խեղճին համար. մաղցումնե-
րը հինգ ժամ տեւեցին. յաճախ պէտք
եղաւ ապառաժներէ կտրուիլ մէկ քա-
նի յայլափոխ կարելու համար. Վահ-
րամ պէտք եղած հոգեկան արիւթիւնը
ունեցաւ տոկալու համար այդ անպատ-
մելի տաժանքին միջեւ որ հասաւ
լեռնագագաթը, Հէնի Մօրի լեռնա-
դաշտը որ հարիւր արտավար տարա-
ծութեամբ տափարակ մըն է. այդ
բարձունքին վրայ կը գտնուին լեռի-
ուրուածեւ կաղնիներ, տանձենիներ եւ
ընկուղիներ լեռնադաշտին աջ ու
ձախ կողմը կը գտնուին անապատ-
ներու օճախներ: Ամայութիւնը ընդ-
հանուր էր. Վահրամէն զատ կենդան

չունչ մը չկար հոն. հինգ ժամու շա-
րունակական տառապանքէն ետք պէտք
եղաւ որ հոն երկրորդ հանգիստ մը
առնէ: Գիշերուան գովութիւնը, իր
քաջած տաժանքը աչքին կոպերը ծան-
րացուցին էին. քնանալու պահանջը
շատ զօրաւոր էր, բայց հարկ եղաւ
քիչ մը նստելով գոհանալ. քրտնքը
այս անգամ, Սանառք Պաղարինէն ա-
ւելի յորդութեամբ կը կաթկթէր ճակ-
տէն. ձեռքերը մէկ քանի տեղերէ վի-
րաւորուած էին. խեղճ փախստականը
կեանքի ընթացքին մէջ առաջինն ըլ-
լալով անքուն գիշեր մը կանցնէր ա-
պառաժներու վրայ անոնցմէ վեր ճան-
կատուելով, առաջին արիւնը թափել,
ի՞նչ է, վաւաշտ Միւստի ծուղակին
մէջ չբռնուելու համար:

Ե. Կարախարական
Շարունակելի

Печатница на Хр. Н. Войниковъ